ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԱԾԱՆՑՎՈՒՄ ԵՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻՑ

Օրակարգում են ազատագրված տարածքների շուրջ քննարկումները

ԳՈՀԱՐ ՎԵԶԻՐՅԱՆ

Վերջին օրերին ղարաբաղյան խնդրի կարգավորման շուրջ պտտվող խոսակցությունները նկատելիորեն աշխուժացել են, չնայած քննարկվող փաթեթի, այսինքն՝ առաջարկվող նոր սկզբունքների եւ մոտեցումների իրական բովանդակությունը առայժմ շատերի համար անհայտ է: Չնայած սրան, փորձեցինք մի քանի քաղաքական գործիչներից պարզել, թե, հնարավո՞ր է, որ պտտվող լուրերը, այնուամենայնիվ, իրականության հետ աղերսներ ունենան, ըստ այդմ՝ դեպքերի զարգացման ինչպիսի՞ ընթացք են ակնկալում:

ԱԺՄ նախագահ, «Արդարություն» խմբակցության ներկայացուցիչ Վազգեն Մանուկյանը խնդրի կարգավորման համար մեկ անգամ եւս կարեւորեց միջազգային կառույցների մասնավորապես Մինսկի խմբի միջնորդությունը: Սակայն միաժամանակ հավաստիացրեց, որ վերջին շրջանում տարբեր քաղաքական ուժերի կողմից հնչող բազմաթիվ հայտարարություններին «շատ լուրջ չի վերաբերում, քանի որ այս հարցում դեռ որոշակիություն չկա»: Զերծ մնալով կանխատեսումներից Մանուկյանը համոզված է, որ «բոլոր դեպքերում, մինչեւ Ադրբեջանում չվերջանան նախագահի ընտրությունները, ինչ-որ բաների մասին խոսելը ավելորդ է, ավելին կիսատ-պռատ պոչեր տեսնելով խոսել այդ կենդանու մասին, ապա եզրակացություններ անել անիմաստ է»: Վերջինիս համար այս խոսակցությունները «պարզապես սովորական դարձած բանավեճեր են, ոչ ավելին»: Նրա կարծիքով, այս ամենը արվում է «հասարակության ուշադրությունը ներքաղաքական խնդիրներից շեղելու կամ հեռացնելու համար»:

Մինչդեռ ԱԺ Հանրապետական խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանի հավաստմամբ «վերջին շրջանում անընդհատ շահարկվող առեղծվածային դարձած միտումները, համաձայն որոնց «բանակցությունները գնում են նախեւառաջ Ղարաբաղի կարգավիճակի խնդրի շուրջ, եւ միանշանակ է, որ Ղարաբաղը Ադրբեջանի կազմում կարգավիճակ ունենալ չի կարող: Մենք Ղարաբաղը տեսնում ենք կամ որպես առանձին պետություն, կամ Հայաստանի հետ միասին»: Ինչ վերաբերում է սպասվելիք լուծումներին, ապա խմբակցության ղեկավարը մեկ անգամ եւս հստակեցրեց, որ իրենց համար «ընդունելի է մեկ փաթեթը, իսկ փուլային լուծումներին մենք դեմ ենք»: Վերջինս վտանգավոր է համարում այն կանխատեսումները, որ հնարավոր է Ադրբեջանում քաղաքացիական պատերազմի տեսքով որոշակի բախումներ սկսվեն, ինչը կարող է «մեզ համար շահեկան չլինել»:

ԱԺ «Օրինաց երկիր» խմբակցության ներկայացուցիչ Մեխակ Մխիթարյանի համար էլ ղարաբաղյան խնդրի կարգավորման շուրջ ծավալվող խոսակցություններն ու շահարկումները անընդունելի են: Իսկ կարգավիճակի դիմաց հողային տարածքների հանձնումը վերջինս միանշանակ բացառեց: Նա եւս կարծում է, որ «փաթեթային տարբերակը առաջնային պետք է լինի եւ առանց ավելորդ շտապողականություն այս սառեցված վիճակը փոխարինվի ակտիվ բանակցային գործընթացով»: Ինչ վերաբերում է վերջին օրերին հարցի հնչեղության մեծացմանը, ապա ՕԵ ներկայացուցիչը գտնում է, որ «այս խոսակցությունները օրինաչափ են, քանի որ խնդրի լուծումը գերակա է եւ միշտ էլ եղել է հասարակության հետաքրքրության կենտրոնում, իսկ մնացած ներքաղաքական զարգացումներն ածանցվում են այս խնդրից»:

Իսկ ԱԺ Ազգային միաբանություն խմբակցության ներկայացուցիչ Աղասի Արշակյանի կարծիքով «Վերջին շրջանում բարձրացված աղմուկը հասարակության ուշադրությունը շեղելու հին փորձված հնարք է, բայց այս անգամ միայն դա չէ նպատակը: Այդ պտտվող խոսակցությունները հիմա իրականացման շատ իրական հիմքեր ունեն»: Վերջինս «փաթեթային զարգացումներից դուրս» մտավախություն ունի, որ, այնուամենայնիվ, «կլինեն տարածքներ, որոնց վրա, ասենք, ԱՄՆ-ը վերահսկողություն իրականացնելու ցանկություն կհայտնի, քանի որ ղարաբաղյան խնդրի կարգավորումը վաղուց դուրս է եկել բուն ղարաբաղյան խնդիր լինելու շրջանակից: Այն դարձել է տարածաշրջանային լուրջ խնդիր ոչ միայն Անդրկովկասի համար»: Այս պարագայում Արշակյանը հակված է մտածելու, որ «զոհի համար միեւնույնն է, թե իրեն ինչո՞վ են սպանել: Եվ ես վախենում են, որ մենք չենք կարողանա այս գործընթացի առաջն առնել»:

Այնուամենայնիվ, խնդրի կարգավորման նոր փաթեթը մոտ ապագայում դրվելու է բանակցային կողմերի սեղանին, եւ այսօր մասնավորապես ազատագրված տարածքների շուրջ պտտվող խոսակցությունների քննարկումը, թերեւս, անխուսափելի կլինի: